ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2020 թվականի N 132-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու, ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար ստորև նշված աշխատակիցներին և համայնքային ծառայողին խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով՝ հաստիքացուցակով հաստատված դրույքաչափերով.

1) Համայնքի ղեկավար - 280 000 դրամ,

2) Համայնքի ղեկավարի տեղակալ - 160 000 դրամ,

3) Աշխատակազմի քարտուղար - 210 000 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 14
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2020 թվականի N 133-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման կարգի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համարել փոփոխված Գետամեջ համայնքի սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0008-0004-ից) 0,14855 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նշանակության այլ հողերից դարձնելով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման (տնամերձ) հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 15
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2020 թվականի N 134-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշումով և N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33, 34-րդ կետերով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30 և 48-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի N 133-Ա որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային սեփականություն հանդիսացող 0,14855 հեկտար մակերեսով հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0008-0004-ից) ինքնակամ կառուցված 17,65 քառակուսի մետր մակերեսով պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ենթակառուցվածքային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 0,14855 հեկտար մակերեսով հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0008-0004-ից) ինքնակամ կառուցված 17,65 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության իրավունքը՝ համաձայն կից ներկայացվող հողամասի հատակագծի:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 1-ին փողոց N 34/4:

3: Դիմել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Կառույցի նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում կառույցը ձեռք բերելու նպատակով գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած անձին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի [illegible]
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2020 թվականի N 135-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 116-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 26-ի «Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված շինության օրինականացման մասին» N 116-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման հողումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշումով և N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33, 34-րդ կետերով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30 և 48-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 26-ի N 115-Ա որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային սեփականություն հանդիսացող 0,06147 հեկտար մակերեսով հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0008-0004-ից) ինքնակամ կառուցված 11,34 քառակուսի մետր մակերեսով ցախանոցի և 40,31 քառակուսի մետր մակերեսով պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝»:

2) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համայնքային սեփականություն հանդիսացող 0,06147 հեկտար մակերեսով հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0008-0004-ից) ինքնակամ կառուցված 11,34 քառակուսի մետր մակերեսով ցախանոցը և 40,31 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականության իրավունքը՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինության հատակագծերի:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 18
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 դեկտեմբերի 2020 թվականի N 136-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 30-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» պարբերությունը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով «ԱԹԵՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը՝ ***որոշում եմ.***

1. «ԱԹԵՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ պահեստային մասի կառուցման շինարարության թույլտվություն:
2. Կառուցապատողը շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Գետամեջ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 18-ի «Շինարարության թույլտվություն տալու մասին» N 17-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱԹԵՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվական դեկտեմբերի 15
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2020 թվականի N 137-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 105-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով «Մալխասյանց փաստաբանական կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կատարված չափագրման արդյունքները՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2014 թվականի դեկտեմբերի 25-ի «Հասցեավորման մասին» N 105-Ա որոշման 1-ին կետում «0217» թիվը փոխարինել «0214» թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աննա Երվանդի Վեհապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 17
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2020 թվականի N 138-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Նախկին Աբովյանի շրջանի Պտղնի այգետարածքի 27 տեղամասի թիվ 61 հողակտոր հասցեում գտնվող Կարինե և Լիանա Սահակյաններին պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, տրված՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ին/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 10-րդ փողոց N 59 այգետնակ:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 29
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2020 թվականի N 139-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Նախկին Պտղնի 27 թաղամասի թիվ 62 հողակտոր հասցեում գտնվող Կարինե և Լիանա Սահակյաններին պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր, տրված՝ 2007 թվականի մայիսի 26-ին/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 10-րդ փողոց N 61:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 29
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2020 թվականի N 140-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Արմեն Ռաֆայելի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2475342, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0104-0013/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 7-րդ փողոց տուն N 24:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 29
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2020 թվականի N 141-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Վարդուհի Մուշեղի Դալլաքյանին պատկանող բնակելի կառուցապատման հողամասին /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, տրված՝ 2014 թվականի ապրիլի 29-ին, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0105-0050/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 7-րդ փողոց N 65 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020 թվականի դեկտեմբերի 29
գ.Գետամեջ